# ՈՐՈՇՈՒՄ

## ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. մարտի 31-ի

## նիստի /արձ.4/

1.Հաստատել ԵԹԿՊԻ-ի մագիստրատուրայի 2015-2016 ուս. տարվա ընդունելության կանոնակարգը՝ որպես հիմք ընդունելով ներկայացված նախագիծը,

1.1 հանձնարարել «Արվեստի պատմության, տեսության և կառավարման» ֆակուլտետի դեկան Ա. Հարությունյանին սույն կանոնակարգի 8.2.1 կետը խմբագրել և հստակեցնել՝ հաշվի առնելով քննարկման ընթացքում արված դիտողությունները:

2. «ԵԹԿՊԻ- ի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգ» -ում և «ԵԹԿՊԻ- ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ» -ում կատարել մասնակի փոփոխություններ և լրացումներ հետևյալ կերպ՝

2.1 Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի 3-րդ բաժնի 3.7 մասի /թ/ ենթակետից հետո կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ՝ <<Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ 40%>>:

2.2 ԵԹԿՊԻ-ի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգում կատարել մասնակի փոփոխություն և 4.9 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. « Ուսանողն իրավունք ունի բողոքարկել ստուգումների գնահատումը արդյունքների հրապարակման օրը: Ուսանողի դիմումը ներկայացվում է դեկանին, ով ամբիոնի վարիչի, դասախոսի, ընթերակայի և ուսանողական խորհրդի ներկայացուցչի հետ քննում է խնդիրը և հաջորդ օրը պատասխանում ուսանողին»:

2.3 ԵԹԿՊԻ-ի հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգում կատարել մասնակի փոփոխություն և 4.8 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ. «Ուսանողն իրավունք ունի բողոքարկել ստուգումների գնահատումը արդյունքների հրապարակման օրը: Ուսանողի դիմումը ներկայացվում է դեկանին, ով ամբիոնի վարիչի, դասախոսի, ընթերակայի և

ուսանողական խորհրդի ներկայացուցչի հետ քննում է խնդիրը և հաջորդ օրը պատասխանում ուսանողին»:

2.4 Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգի հավելված 1-ը խմբագրել և <<Գնահատականի թվային համարժեքը>> սյունակից հետո կատարել լրացում հետևյալ բովանդակությամբ՝

| Գնահատման բազմաբաղադրիչ համակարգ | Տառային գնահատական | Ուսանողների գիտելիքների բնութագիր | Գնահատականի թվային համարժեքը | Գնահատականը |
|---|---|---|---|---|
| 100-97<br>96-90 | A | Լիարժեք գիտելիքներ առանց սխալների<br>Լիարժեք գիտելիքներ թույլատրելի քանակությամբ երկրորդական սխալների մի քանի դեպքերով: | 4,0<br>3,7 | Գերազանց |
| 89-85<br>84-80 | B | Լավ արդյունք, առկա են երկրորդական սխալների մի քանի դեպքեր:<br>Ընդհանուր առմամբ լավ է, բայց առկա են հիմնական խնդրի վերաբերյալ որոշ սխալներ: | 3,3<br>3,0 | Լավ |
| 79-70 | C | Գիտելիքների ընդունելի մակարդակ զգալի թերություններով: | 2,7 | |
| 69-60 | D | Գիտելիքների ընդունելի մակարդակ լուրջ թերություններով: | 2,3 | Բավարար |
| 59-55 | E | Գիտելիքները ցածր են, բայց ընդհանուր առմամբ բավարար են դասընթացի հիմնական գաղափարների ներկայացման համար: Առկա են հիմնական և երկրորդական սխալներ: | 2,0 | |
| 54-41 | F | Շատ թույլ գիտելիքներ, որոնք բավարար չեն դասընթացի իմացությունը հավաստելու համար:<br>Ուսումնասիրվող առարկայի | 1,7 | Անբավարար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 40 և ցածր | | վերաբերյալ գիտելիքի բացակայություն: | 1,0 | |
| | | | | |
| 100-55 | S | Գիտելիքներ, որոնք բավարար են դասընթացի իմացությունը հավաստելու համար: | | Ստուգված |
| 54-0 | U | Գիտելիքներ, որոնք բավարար չեն դասընթացի իմացությունը հավաստելու համար: | | Չստուգված |

3. 2014-2015 ուս. տարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի վերաբերյալ ամբիոնների վարիչների զեկույցներն ընդունել ի գիտություն, կատարման ընթացքը համարել բավարար:

4. ԵԹԿՊԻ-ի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 2015-2016 ուս. տարվա ընդունելության ցանկում ներառել 070300 «Ռեժիսուրա» մասնագիտությունը:

5. ԵԹԿՊԻ-ում և ԵԹԿՊԻ մասնաճյուղերում բակալավրի կրթական ծրագրով 2015-2016 ուսումնական տարվա ընդունելության համար ըստ մասնագիտությունների սահմանել ուսման վարձավճարի ներքոհիշյալ չափաքանակները (տես հավելված 1)

5.1 ԵԹԿՊԻ-ի առկա ուսուցման բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառող սփյուռքահայ (բացի վիրահայ և սիրիահայ ուսանողների) և օտարերկրացի ուսանողների համար ըստ մասնագիտությունների սահմանել ուսման տարեկան վարձավճարի հետևյալ չափաքանակները (տես հավելված 2)

6.Հաստատել 071300 Կինոարվեստ և 071400 Օպերատորություն մասնագիտությունների կրթական և առարկայական մասնագրեր-նկարագրերը:

7. Արձանագրել, որ «Արվեստի պատմության և տեսության» ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման նպատակավ կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

7.1 հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը,

7.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գրիգոր Վրույրի Օրդոյանը ձայների մեծամասնությամբ /23 կողմ, 2 դեմ/ 5 տարի ժամկետով ընտրվել է «Արվեստի պատմության և տեսության» ամբիոնի վարիչի պաշտոնում,

7..3 առաջարկել ԵԹԿՊԻ-ի ռեկտորին Գ. Օրդոյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր սահմանված կարգով / ԵԹԿՊԻ-ի ամբիոնների վարիչների ընտրության կարգ՝ կետ 40/:

8. Արձանագրել, որ դոցենտի գիտական կոչում շնորհելու նպատակով կազմակերպված

փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

8.1հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունները,

8.2 փակ , գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ՀՀ գիտամանկա-վարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ/ ենթակետի համաձայն **Յուրիկ Լևոնի Կոստանյանին** միաձայն շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01 <<Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն >> մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

8.3 փակ , գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա, ՀՀ գիտամանկա-վարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի 5-րդ կետի դ/ ենթակետի համաձայն **Շանթ Մելսի Հովհաննիսյանին** միաձայն շնորհել դոցենտի գիտական կոչում ԺԷ.00.01 <<Թատերական արվեստ, կինոարվեստ, հեռուստատեսություն>> մասնագիտությամբ և խնդրել ՀՀ ԲՈՀ-ին հաստատել գիտական խորհրդի որոշումը:

9. Ինստիտուտի հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ Հ. Ավագյանի զեկույցն ընդունել ի գիտություն,

9.1 ինստիտուտի հավատարմագրման նախապատրաստական աշխատանքների և անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի պատրաստման վերջնաժամկետ սահմանել ս.թ. հոկտեմբերի 15-ը,

9.2 գիտական նստաշրջանների նախապատրաստման ընթացքի վերաբերյալ Գ. Օրդոյանի և Ա. Երզինկյանի զեկույցներն ընդունել ի գիտություն:

Գիտքարտուղար Գ. Հովհաննիսյան

*Հավելված 1*

# Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ **ԲԱԿԱԼԱՎՐԻ** ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2015/16 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ

| Մասնագիտության ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ | այդ թվում՝ | | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/ | Ուսման վարձը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների տեղ | նպատակային ընդունելության տեղ | | |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** |
| 070200 | Դերասանական արվեստ (դրամ. թատրոնի և կինոյի դերասան) | 14 | 1 | | 46 | 600 |
| 070300 | Ռեժիսուրա (դրամ.թատրոնի ռեժիսուրա) | 6 | | | 10 | 600 |
| 070400 | Թատերագիտություն | 2 | | | 4 | 450 |
| 071300 | Կինոարվեստ (խաղարկային ֆիլմի ռեժիսուրա, վավերագրական ֆիլմի ռեժիսուրա, հեռուստառեժիսուրա) | 7 | 1 | | 44 | 600 |
| 071400 | Օպերատորություն (կինոօպերատորություն) | 3 | 1 | | 12 | 600 |
| 071700 | Սոցիալ-մշակութային գործունեություն (արվեստի կառավարում) | 2 | | | 10 | 600 |
| 071900 | Գեղանկարչություն (թատրոնի և | 2 | | | 6 | 600 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կինոյի նկարչություն) | | | | | |
| 070700 | Պարարվեստի ռեժիսուրա | 2 | | | 10 | 600 |
| 072500 | `Կինոգիտություն | 2 | | | 4 | 450 |
| 071800 | Համակարգչային գեղարվեստական նախագծում | | | | 4 | 450 |
| 071200 | Գրական ստեղծագործություն (սցենարական և դրամատուրգիական հմտություններ) | 2 | | | 4 | 450 |
| 072400 | Հագուստի մոդելավորում (ներկայացումների և ֆիլմերի զգեստներ) | | | | 4 | 450 |

ԵԹԿՊԻ –ի Գյումրիի մասնաճյուղ

| Մասնագիտության ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ | այդ թվում՝ | | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/ | Ուսման վարձը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների տեղ | նպատակային ընդունելության տեղ | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 070200 | Դերասանական արվեստ (դրամ. թատրոնի և կինոյի դերասան) | 2 | | | 12 | 350 |
| 070300 | Ռեժիսուրա (դրամ.թատրոնի ռեժիսուրա) | 2 | | | 3 | 350 |
| 070600 | Պարարվեստ | 1 | | | 5 | 350 |
| 071300 | Կինոարվեստ (հեռուստառեժիսուրա) | 1 | | | 7 | 350 |
| 071400 | Օպերատորություն (կինոօպերատորություն) | 2 | | | 5 | 350 |

ԵԹԿՊԻ-ի Վանաձորի մասնաճյուղ

| Մասնագիտության ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ | այդ թվում՝ | | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/ | Ուսման վարձը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների տեղ | նպատակային ընդունելության տեղ | | |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** |
| 070200 | Դերասանական արվեստ (դրամ. թատրոնի և կինոյի դերասան) | 2 | 1 | | 13 | 300 |
| 070300 | Ռեժիսուրա (դրամ.թատրոնի ռեժիսուրա) | 1 | | | 5 | 300 |
| 070600 | Պարարվեստ | 1 | | | 4 | 300 |
| 071300 | Կինոարվեստ (հեռուստառեժիսուրա) | 1 | | | 4 | 300 |
| 071200 | Գրական ստեղծագործություն (սցենարական և դրամատուրգիական հմտություններ) | 1 | | | 4 | 300 |

ԵԹԿՊԻ-ի Գորիսի  մասնաճյուղ

| Մասնագիտության ծածկագիր | Մասնագիտության անվանումը | Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ | այդ թվում՝ | | Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ, առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի /վճարովի/ | Ուսման վարձը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդների տեղ | նպատակային ընդունելության տեղ | | |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** |
| 070200 | Դերասանական արվեստ (դրամ. թատրոնի և կինոյի դերասան) | 1 | | | 8 | 300 |

*Հավելված 2*

**ԵԹԿՊԻ-ի առկա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառող սփյուռքահայ (բացի վիրահայ և սիրիահայ ուսանողների) և օտարերկրացի ուսանողների վարձավճարներ**

| Հ/հ | Սփյուռքահայ և օտարերկրյա ուսանողների համար հասանելի մասնագիտությունների ցանկ | Կրթական աստիճան | Վարձավճարի չափ | | Ուսուցման լեզու | Այլ նշումներ | Վարձավճարի չափ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Սփյուռքահայ | Օտարերկրյա | | | Սփյուռքահայ | Օտարերկրյա |
| 1. | 070200 Դերասանական արվեստ (դրամ. թատրոնի և կինոյի դերասան, տիկնիկային թատրոնի դերասան, երաժշտական թատրոնի դերասան, հաղորդավարական, մնջախաղի թատրոնի դերասան) | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 750.000<br>750.000 | 850.000<br>850.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 2. | 070300 Ռեժիսուրա (դրամ. թատրոնի ռեժիսուրա, մասսայական հանդիսությունների ռեժիսուրա) | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 750.000<br>750.000 | 850.000<br>850.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 3. | 070700 Պարարվեստի ռեժիսուրա | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 750.000<br>750.000 | 850.000<br>850.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | 071300 Կինոարվեստ<br>1. խաղարկային ֆիլմի ռեժիսուրա<br>2. վավերագրական ֆիլմի ռեժիսուրա<br>3. հեռուստառեժիսուրա<br>4. անիմացիոն ֆիլմի ռեժիսուրա<br>5. հնչյունային ռեժիսուրա<br>6. մոնտաժի ռեժիսուրա | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 750.000<br>750.000 | 850.000<br>850.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 5. | 071900 Գեղանկարչություն (բեմանկարչություն, մուլտնկարչություն) | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 750.000<br>750.000 | 850.000<br>850.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 6. | 071400 Օպերատորություն (կինոօպերատորություն) | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 750.000<br>750.000 | 850.000<br>850.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 7. | 070400 Թատերագիտություն | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 550.000<br>550.000 | 650.000<br>650.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 8. | 071700 Սոցիալ-մշակութային գործունեություն (արվեստի կառավարում) | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 750.000<br>750.000 | 850.000<br>850.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 9. | 072500 Կինոգիտություն | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 550.000<br>550.000 | 650.000<br>650.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 10. | 071200 Գրական ստեղծագործություն | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 550.000<br>550.000 | 650.000<br>650.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական | 350.000 | 400.000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ծրագրով | | |
| 11. | 071800 Համակարգչային գեղարվեստական նախագծում | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br><br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 550.000<br><br>550.000 | 650.000<br><br>650.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |
| 12. | 072400 Հագուստի մոդելավորում | ԲԱԿԱԼԱՎՐԻ<br><br>ՄԱԳԻՍՏՐՈՍԻ | 550.000<br><br>550.000 | 650.000<br><br>650.000 | Հայերեն | Նախապատրաստական դասընթացներ բակալավրի կրթական ծրագրով | 350.000 | 400.000 |